

# ԱԶԱՏ ԽՕՍՔ

ՇԱԲԱԹ, 28 ԱՊՐԻԼ 1906, ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

## ՆՈՐ ՇՐՋԱՆԸ

Ինչպէս արդէն ծանուցած էինք և ինչպէս ծանուցին էջիպտահայ թերթերը, այս թիւով «ԱԶԱՏ ԽՕՍՔ», կը սկսի հրատարակուիլ կանոնաւորապէս ամէն շաբաթ օր: Այն ընկուենդութիւնը զոր բնթերթոյնը ըրին անկանոն «ԱԶԱՏ ԽՕՍՔ», ինչ, վստահ ենք որ այժմ աւելի պիտի շեշտուի. և որովհետև մեր գտած յաջողութիւնը մեր բռնած ուղղութեան արդիւնքն է, բնական է որ պիտի յարատեկնք այդ ուղղութեան մէջ:

«ԱԶԱՏ ԽՕՍՔ», ը հիմնելով, առաջին օրէն, մեր նպատակը եղած է բացարձակապէս անկաս թերթ մը ու նենալ ուր կարող ըլլանք իրերն ու մարդիկը անկաշկանդօրէն դատել և եթէ հարկ տեսնենք՝ զատափետել: Այս տետրակը օրկանը չեղաւ ու չպիտի ըլլայ որ և է կուտակութեան մը, որ և է խմբակի մը, որ և է անձի մը:

«ԱԶԱՏ ԽՕՍՔ», ո՛չ հին կամ նոր Հնչակեաններու օրկանն է ուրեմն, ո՛չ Դաշնակցականներու, ո՛չ սահմանադրականներու, ո՛չ միութենականներու, և ո՛չ ալ լծնամակաշեաններու, «ԱԶԱՏ ԽՕՍՔ», և ո՛չ իսկ Տ. Յակոբ

Ուղտ րեանն օրկանն է. բայցարձա՛յա գևս ինքզինքին կը պատկանի :

Սա ևս ըսենք որ մեր համոզումները, կարծիքները կամ ուղղութիւնը եկեղեցիին բակը աճուրդի չ'ենք զրած և թէ 30 - 40 սակի փոխարէն շիշ համաձայնութիւններ կամ վատ դասաւըութիւններ չենք կարող ընել :

Յայտնի է որ այս թերթը պաշտական պիտի ըլլայ, բայց ո՛չ այն ձևով ինչպէս ընրոնուած է ընդհանրապէս մեր մէջ. այսինքն՝ իրրև գոհճիկ հացկատակ մը կամ հապիտ մը որ իրեն պաշտօն ընտրած է ժողովուրդը խնդացնել կարգ մը խեղկատակութիւններով: Չէ՛, մենք խնդացնողներ չենք այլ՝ խնդացողներ և ե՛յէ մեզի հետ ընթերցողն ալ խնդայ, ատիկա իր գիտնաչիք բանն է և մենք ատար համար որ և է ջանք պիտի չընենք :

Պիտի խնդանք առանց քէն կամ որս, տաեւութիւն կամ նախանձ խառնելու մեր ձիճապին մէջ, որովհետև ծիճալը սուրբ, աստուածային է. գուցէ միակ ձիրքն է որ մեզ կը բաժնէ միս բոլոր կենդանիներէն որոնք չեն գիտեր խնդալ:  
ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

### ԺՈՂՈՎՈՒՐԴԸ Կ'ԱՐԹՆՆԱՅ



Վէտովի յանկարծական բորբոքումէն ետքը, Սան Ֆրանչէսքոյի վայրիկնական կործանումէն ետքը, անցած կիրակի օր վրայ հառաւ Ալեքսանդրիոյ սահմանադրական պայքարին անսկիսկալ վերարձարձումը :

Էկեղեցական արարողութեան ատարտումէն յետոյ, երբ Առաջնորդ Հայրը վերի գահլիճը ելաւ, Միհրան Տամատեան Առաջնորդարանի զրան առջև յայտարարեց ժողովուր-

դին թէ գատգամաւորութիւն մը պիտի ներկայանայ նոյն վայրկեանին Տ. Աղանունի վարկապետին և Սահմանադրութեան գործադրութիւնը պիտի պահանջէ ու յորդորեց ժողովուրդը որ սպասէ այս դիմումի ելրին :

Պատգամաւորութիւնը, երեսունէ աւելի հոգիներէ բաղկացած, վեր ելաւ իր պաշտօնը կատարելու : Երեք ժամուան բանակցութենէ մը ետքը, որուն միջոցին խնամակալութիւնը քառասուն բերաններէ հօտոյ տաք թու ժ առաւ իր դիմին, թէև առանց կարենալ մաքրուելու իր ազատութիւններէն, առաջնորդ հայրը ընդունեց որ պէտք է անմիջապէս կարգադրութիւն մը ընել և խօսք տուաւ որ Գահիրէ չլիբրարձած պիտի հրաւիրէ Ալեքսանդրիոյ հայ գաղութին պատուաւոր և արժանաւոր անձեր, որոնց կարօտը կը քաշնէք երեք տարիներէ ի վեր. ընտրութեանց մասին նախապատրաստական խորհրդակցութիւններ կատարելու համար :

Ներկաները, գոհ այս իօստուժէն, մեկնեցան և Առաջնորդը առանձնանալով հրամայեց որ իր ճաշը բերեն անմիջապէս, քանզի ո՛չ միայն սահմանադրութեամբ կեցցէ մարդ :

Այս գեպքին առաջին արարուածն է :




### ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ

Մինչ Առաջնորդարանի մեծ գահլիճը ժողովուրդ և Առաջնորդ կարգ մը թիրիմացութիւններէ ետք համաձայնութեան մը կը յանգէին, անպին խնամակալութիւնը, շրտական փութկոտութեամբ մը Ալեքսանդրիոյ կառավարչատան կը հեռաձայնէր թէ՛ խողարարները ազգային Առաջնորդարանին և Առաջնորդ Հօր վրայ յարձակուժ գործած են : Կառավարչատունը որ քանի քանի անգամներ խաբուած էր

Բարթոլոմայ փառայի աչք տեսակ սուտ տեղեկութիւններն, բնականաբար մեծ կարեւորութիւն մը չընծայիր հեռաձայնին, այսուհանդերձ ժամը 3/2 ին միջոցները ստիկանասան կողմէ պաշտօնեայ մը կը ներկայանայ Ս. Առաջնորդին և կը հարցնէ թէ ի՞նչ պատահած է և թէ «ԽՈՒՎԱՐԱՐ», ներք ի՞նչ նախճիրներ գործած են: Առաջնորդ Հայրը կը սարգէ ճշմարտութիւնը և պաշտօնեան կը մեկնի գլուխը օրօրելով: Հոս չլինար սակայն ինամակալութեան ստորնութիւնները: Առաջնորդարանի բարոյազուրկները չեն վարանիր իրենց վատ զրպարտութիւնները կրկնելու կառավարչասան մօտ և նոյն իսկ յականէ յանուանէ մասնելու՝ իբրև պատարկապորտ խռովարարներու պարագլուխ, Տ. Յ. Շնորհքեանը Տ. Մ. Տամատեանը Տ. Կ. Տէրվիշեանը և Տ. Շ. Հովիեանը:

**Պ Ա Տ Ի Ժ Ը**

 Չորս « զատարկապորտ խռովարար » ներք կը հրաւիրուին կառավարչատուն եւ կը ներկայանան Վսեմ. Մուսխաֆա փաշա Ապատիի, որ ինչպէս յայտնի է, քանի մը օրէ իվեր միայն իր պաշտօնին գլուխը անցած է, յաջորդելով Վսեմ. Սըաքը փառայի. Հոն ճշմարտութիւնը յայտնի կըլլայ եւ խնամակալութեան ամօթալի ստութիւնները եւ զրպարտութիւնները մէջտեղ կելլեն: Տ. Յ. Շնորհքեան առիթէն օգուտ քաղելով, երկու ժամի շափ Վսեմ. կառավարչին կը բացատրէ ժողովրդեան պահանջները և միանգամայն կը պատմէ մեր արդի ապօրէն խնամակալութեան խաղաղութիւնները, Պապը Սիտրայի և Ամբերիկեան փոզոցի գայթակղութիւնները, անչափահաս ազջիկներու և յոյն աղջկան մը վրայ կատարուած պղծութիւնները, և ըն և ըն:

Վսեմ. Մուսխաֆա փաշա Ապատի մեծապէս տպաւոր-

եղով այս բացատրութիւններէն. շնորհակալութիւն կը յայտնէ “գատարկապարտ խառվարար” ներուն եւ կըսէ թէ՛ իր անկեղծութիւնը չպիտի զլանայ սրպէսզի ժողովրդեան արդար փափաքը իրագործուի: Այս տեսակցութեան ներկայ գտնուած են նաեւ Քումանտան Պէյը, Հէօտէյա Պէյ եւ ուրիշ ոստիկանական բարձր պաշտօնեաներ որոնք շատ անգամներ ինամակալութեան վեմաշուք անդամներուն անբարոյական կեանքի խողբութիւնները պաշտօնապէս ստուգած ըլլալովսին, տեղեկութիւններ կը հաղորդէն Վսեմ. կառավարչին:

Արդար սատիժ իրենց մատնութեան:

Եւ մտածել թէ ի՞նչ տակալի չարիքներու պատճառ պիտի ըլլար Բարձրագ ժաշայի պէս մէկը եթէ թուրքից նման երկրի մը մէջ գտնուէր ու հո՛ն կատարեր այս անլուր արարքները, մինչդեռ բարեբախտաբար հոս, Եգիպտոսի ան լուսամիտ եւ ազատասէր իշխանութեան տակ իր Յօդոյի կամ Վասակի շահատակութիւնները կը մընան անգոր եւ նոյն իսկ իրեն դէմ կը գտնան, ինչպէս այս անգամ:

#### ԱՐԺԱՆԱԻՈՐ ՄՐՅԱՆԱԿ

Տեղւոյս եւրոպական թերթերը կը ծանուցանեն թէ անցած շաբթու Սան Ստեֆանոյի մէջ տեղի ունեցած տարեկան բուսաբանական ցուցահանդէսին մէջ Վսեմ. Աբրահամ բաշա Բարձրագ զդումի (պալքապաք) առաջին մրցանակը ստացած է:



32

Մ Ա Վ Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր Ո Ւ Լ Ե Չ Ո Ւ Ն



բ Ա ըթող փաշա

ն իզամեան

չէր ի տճեան

ուղու թ եան

ըէիզե Ա ն

ըի ի րաս

զա ֆ էեան



Յ տեան

Թու թ շուճեան

տ է լոլիշեան

տամատեա ն

չնորհ ֆ եան

**ԲԱՆԱԿԸ Ի ՉԷՆ ԿՈՉՈՒԱԾ**



Խնամակալութեան բանակը որուն անցած տարւան քաջագործութիւնները դեռ ամենուն երեակալութեան մէջ վառ են, ինչպէս յայտնի է լուծուած էր սահմանադրական պայքարը բոլորովին մարած ենթադրուելով: Կիրակի օրուան ժողովրդական յիմուժը առ Ս. Առաջնորդ հայրը ցոյց տուաւ թէ օրէնքի գործադրութիւնը պահանջողները տակա ին յուսահատած չեն: Այժմ կըսուի թէ, Կիրակի օրուայնէ ի վեր, մեծ իրարանցում կը տիրէ ինտամակալեան շրջանակին մէջ և թէ երեքշաբթի գիշեր տեղի ունեցած արատաւորը գումարման մը պահուն որոշուէր է կրկին բանակը անմիջապէս գործօն վիճակի մէջ գնել և ասոր համար կարեօր վարկ մը բացուած է: Բանակին քաջարի հրամանատար Քէօր Նշան որ արձակարկով օգտփոխութեան զրկուած էր Յունաստան՝ հեռագիր ստացել է անմիջապէս Ալեքսանդրիա վերադառնալու ար իր ներկա յուժիւնը անհրաժեշտ կը նկատուի Խնամակալութեան **Prestige**-ը բարձրացնելու համար:

Եանօթ սահմանադրականներու անձին գէժ յարձակմանց և զանազան ոճրափորձութեանց ծրագիր մը արդէն պատրաստուած է մասնագէտներու կողմէ և մատուցուած ուր որ անկ է, ի վաւերացումն:

Կըսուի թէ այս անգամ նախորդէն շատ աւելի մեծ վարձատրութիւններ պիտի տրուին այն անձնուէրներուն որոնք յանձն պիտի առնեն զինուորագործիլ ինտամակալեան բանակին:

Քէօր Նշանը զիմա-որելու և փայլուն ընդունելութիւն

մը կատարելու համար կարգադիր մասնախումբ մը բնա-  
բըւած է որսն կանդամակցին խնամակալութենէն երիջ  
անդամներ: Հրամանատարը հոս հասնելուն Տ. Յ. Աւ-  
զուրեան իրեն պիտի նուիրէ պատուոյ ՍՈՓԱ մը ու  
բուն փայտը Տեսունեսէն յատկապէս բերուած է:

## ԻՄ ՃԻՃՕՁԻԿԸ

Օրինակ՝ «ԻՄ ՄԱՀԸ», Եղսնակ՝ «ԵՐԲՈՐ ԲԱՑՈՒԻՆ»

Եթէ Շնորհքն և Քուէտփ

Ոնհուն ցամամբ մ'եղեն իմ զեմ,

Հոսի՝ արինս իրրե Շուրուք՝

Գիտցէ՛ք որ զեռ թաղական եմ:

Եթէ սընարս՝ իմ Ուլուրիկ

Մոմ մը վըտիտ ու մահազեմ

Ո՛հ, գայ անկել ստտիկ-տոտիկ՝

Գիտցէ՛ք որ զեռ թաղական եմ:

Եթէ կործբոլս ականակուռ

Խաչը հանէ զիս Ազատ բեմ

Եւ զիս նետէ՛ շանց կերակոր՝

Գիտցէ՛ք որ զեռ թաղական եմ

Եթէ գոռայ ձայն Տամատի

« Բիրամիտի », բեմէն զծխեմ,

Անուանարկել զիս նըլըրտի՝

Գիտցէ՛ք որ զեռ թաղական եմ:

Եթէ ասարզը կրծու թրթու  
 Պարպէ քացախ՝ զըրանս ի սեմ,  
 Տորթորն ալ տայ ինձ թոյն ազդու՝  
 Գիտցէք որ զեռ Թագական եմ:

Ե՛նէ վրբաս Պէյն ազօթէ.  
 Բիրբաւ թեղիկս ալ բոնեն դեմ,  
 Քիթ յսանն: հոգոյս գառ մը մորթէ՝  
 Գիտցէք որ զեռ Թագական եմ:

Իսկ թէ վերէն օր մը իջնայ  
 Ապահունին տէտորաղմ,  
 Գայ տնկուի գէմս անինայ՝  
 Ճիծօզն յայնժա՛մ ես կը գնեմ...:  
 Ի դիմաց Մեծ Թագականին  
 ԿԻԿՕ ( Առիսկին ԿՕԿՕ )

ՍՈՒՆԻ ԹԱՆՐ ԿԸ ՃԱՄԲՈՐԿԷ

Լոնտոնէն 20 Ապրիլ թուականով կը հետազրեն Բա-  
 րիզի Փուրնուլ թերթին. — Բեկ Մեղ Կագեթին հայելով  
 արեւնահատաւ յուրեր կ'ըսեն թէ մէկ վայրիեանէն միտը  
 պէտք է սպասել թո՛ւրքիոյ Սուլթանին մահուան լուրին:

Իր ատողջութեան մասին, որ շատ վրդովիչ է, ամենա-  
 խորին պաղտնիք կը պահուի:

Մեր Գահիրէի թղթակիցն ալ մեզ կը տեղեկագրէ.  
 « Նամակս հասցնեպով կը գրեմ: Սուլթանին ծանր հի-  
 ւանդութիւնը կը ստուգուի: Զամպաքօ փաշան որ հոս է  
 կանչուեցաւ բժշկական գործողութեան համար: »

կը լսենք թէ Վսեմ. Միհրան խան Գալֆայեան իմա-  
նալով Սուլթանին ծանր վիճակը, անմեղապէս տասը ոս-  
կի զրկած է Պրուսայի նախորդ առաջնորդ Բարթոլոմէոս  
Կպիսկոպոսին որպէսզի « վասն բռնկութեան » Աւետարան  
մը կարգայ: Յայտնի է որ վերջերս Սուլթանը Շէֆաբա-  
թի պատտանշանը շնորհած էր Վսեմ խանին արկնոջ,  
Թուրքիոյ կառավարութեան մատուցած չենք գիտեր ինչ  
ծառայութեանց ի վարձատրութիւն:

### Ա Յ Յ Ե Լ Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ը

Ներկայ գտնուած չըլլալով Կիրակի օրը եկեղեցիին  
մէջ անցած դարգածներուն, ելայ անձամբ այցելութիւն  
մը տուի. Առաջնորդարանին, տեղւոյն վրայ բնա-  
թիւն մը ընելու մտք. որովհետեւ շիտակը ըսելու հա-  
մար. շատ վստահութիւն չունիմ մարդոց՝ միակ դէպրի  
մը մասին տուած վկայութիւններուն ճշգրտութեանը վրայ  
որոնք այնչափ կը նմանին իրարու որչափ բռնամտեալ  
ընտանիքի մը դաւակները. շատ քիչ եւ երբեմն բնաւ  
Աւելի հաւատք ունիմ իրերուն, առարկաներուն վրայ  
որոնք չեն ստեր, որովհետեւ չեն խօսիր: նպատակս էր  
բուն ճշմարտութեան հասնիլ՝ հարցաբնեւելով Առաջ-  
նորդարանին պատերը, որոնք ակունջ ունին կ'ըսուի-  
զննելով դէմս ելող դէմքերը, զիտելով առարկաներուն  
վիճակը որոնք հարկաւ հետք մը, յիշատակ մը պահած  
ըլլալու էին անցած դացած իրարանցումէն. մանրակրկիտ  
տեսութեանէ մ'անցունելով վերջապէս Առաջնորդարանին  
ընդհանուր զիմագծութիւնը, զիմագծութիւնը կ'ըսեմ  
որովհետեւ կը հաւատամ որ Առաջնորդարանը նուազ  
աներես է քան ինչ ինչ ամականներով պատշտծորէն  
որակուած ինամակալութիւնը:

Պարտէզին դռնէն ներս սր մտայ, ամենէն առաջ աչ-

րիս զտրկին արմատենիներն իրինց բարձր հասակովը որոնր հովէն, - գողցես ազգասիրական խանդավառութեան բուռն հովէ մը դրդուած՝ շնորհալի կերպով բարեկուտային, - նոր բարև մը, երկար բացակայութենէ մը ետորը այնքան կարտեալ ՍաՀմանադրութեան որ կը մտենար. . .

Ասիկա սրտայնդեց գիտ եւ բաջալէրեց աւելի յառաջ տանելու քննութիւնս ... որովհետեւ, ի՛նչ մեղքս պահեմ, ես պատրաստուած էի, կիրակի օրուան դէպքին հետեւանքով եւ խնամակալական բարձրագոյն տընորինութեամբ, Առաջնորդարանը լեցուած տեսնելու խուճի մը օտար ոստիկաններով որոնր պաշտօն ունենային ամէն ներս մտնող նկատելու իբրեւ Հայ, եւ զամէն ... Հայ իբրեւ խոսվորար, — եկեղեցիէն ուղիղ գծով բանտ երթալու ամէնէն կարճ ճամբան ...

Ենթադրութիւնս սխալ ելաւ, պէտք է խոստովանիլ, եւ դէմս ելլող ըլլալով՝ տեսայ միայն ազգային երկու սեռէ եւ մէկ քանի տեսակէ ու աստիճանէ պաշտօնեաներ, խոնարհ ծառաներ խնամակալութեան եւ կոկողավիղ պետեր բազմակողմանի ապիկարութեան, որոնք այժմ կ'երթային քայլամուտք, գլխահոկ եւ անվստահ : Իմաստասիրական խորին տրտմութեամբ մը կը մտածէին անշուշտ որ այս անցաւոր աշխարհին մէջ ամէն բան վախճան մը ունի, աւա՛ղ, թէ ապօրինութիւնն եւ անպատուութիւնն անգամ յաւիտենական չեն յատիս, եւ թէ ամէնէն հանգստուէտ ու շահաբեր պաշտօններուն տարուկ ծոցին մէջ օձ մը կը մեծնայ, ափսո՛ս, անիծեալ հրաժարականը ...

Առաջնորդարանի զրան առջև, զոնապանը չի կար, և ոչ իսկ իր աթոռը. քննիչ յանձնախմբի մը միայն յառուկ ենթադրազօր երևակայութեամբ՝ անմիջապէս գուշակեցի որ խնամակալութիւնը զանոնց երկուքն ալ ճամբած էր, կի-

բախի օրը վեր խոժոյ ժայռըրային մակրնթացութիւնը  
արգելած չըլլա՞նուն համար... Արգա՞ր. անօրէնութիւն :

Շիրս մտայ. ձայն ձուն մարդ մարդասանկ չի գար :  
Էրլիտդած, երլիտոս լսութիւն մը կը տիրէր հոն, վարկն  
վեր. հետեկելով սակայն բանասանկներս խորհրդին սրտը  
ամենախորին պերճախօսութեան մը, խորհրդասաց անհուն  
լեզուի մը յատկաթիւնները կը վերազբին լստեսեան, ա-  
կանջ տուի ասոր, — անանց վախնալու որ ականջիս...  
զլիւռն գայ փորձանք մը հման այն փորձանքին որ հե-  
րոս... ( ականջը խօսի տմխալաճառ պատուելիին ) —  
Մտիկ ըրի ե, բանասանկներուն խաթըը թող չի մնայ,  
— բան մըն ալ չիմացայ :

Վեր ելայ. ոչ որ. ամայութիւն, լսութիւն : Շէնքը ամ-  
բողջ կարծես այսպիսով կը բաւեր, յաչս խնամակալու-  
թեան, մէկ բանի օր առաջ իր մէջ կատարուած բմբոս  
բազմութեան և ազատ խօսքի մեղքերն անհամար...

Օգտուելով շէնքին այս վիճակէն, վեր կընայ : Ապշեցու-  
ցիչ բան մը ուշադրութիւնս գրաւեց անմիջապէս. այն է  
գուռի, ո՛ր և է գուռի բացակայութիւնը. բոլոր սենեակները  
բացուած կին, Հա՛բարձու՛ Սղային ծրարին պէս .. և  
գուռները վերցուած, յարեա՛ր ելա՞ծ... : Ի՞նչու :

Շիտակը անկեղծօրէն հիացայ խնամակալութեան այս  
հանճարէկ հնարքին վրայ. ստիկ ապահով միջոց կարելի  
չէր երևակայել արգելելու համար ժողովուրդը, երկրորդ  
այցիլութեան մը, ամէն ինչ գոցել, կրկնել և կնքել... :

Առաջնորդարանի մեծ սրահին մէջ, բլրորովին հակա-  
խորհրդարանական իրարանցում մը կը տիրէր. աթոռները

տակն ու վրայ, իրարու վրայ ելած, իրարու դէմ կանգնած, կոտելու կամ վիճելու ձեւերով, կարծես... սեղանին ծածկոյր առաւել կանանչցած բան երբեք, վախն ու յուզէն... Գեանն զարզը կոխկոտուած, ճմաթկուած, բնչպէս եղեր էր այն օրը ի բաղախայութեան «յստակ ու բարձր ձայնով» զատապարտուած խնամակալութիւնը .

Ոչ մէկ տեղ թուղթի տեսարակի հետք, — ամէնքն աչքախիւս կարծես զրատուելու կնքուելու վախն:

Թէկէֆօնին վիճակը պարզապէս արգահասեցի էր. կոտորած, բախուած, ինքնիրմէ ելած, կը մատնէր թէ ինչ շուարումի, զողի ու բարկութեան պաշտօնական մատներ, բլթ, բիրան ու տկանջ զայն խոշտանգէր, բռնաբարեր ու ճնշեր էին:

ՊՈՒՆԴ

### Վ Ա Ղ Ը

Օրուան հարցը, օրուան խօսակցութիւնը տուներու և հանրային վայրերու մէջ, անցած կիրակի օրու ընէ իվեր, սահմանագրական պայքարին վերսկսումն է: Ուրախալի է տեսնել որ գրեթէ ամբողջ ժողովուրդո, այս անգամ շատ աւելի եռանդով փարած է օրէնքը գործագրելու գաղափարին և խնամակալութեան մէկ քանի բռնադատուած փաստաբանները, որոնք զանազան շահերով կապուած են ներկայ ապօրէն մարմնոյն և գրեթէ ակամայ ստիպուած են պաշտպանել զայն, շատ խեղճ ու կրակ վիճակի մը մատնուած են:

Կը ըսենք թէ վաղը՝ կիրակի՝ ժողովուրդը աւելի մեծ բազմութեամբ կը պատրաստուի եկեղեցի դիմել և հո՛ն կրկին սահմանադրութեան զործադրութիւնը պահանջել: Վստահ ենք որ այս անգամ ևս օրինասէր հասարակութիւնը պիտի գիտնայ իր արդար իրաւունքները ամենայն կարգապահութեամբ պաշտպանել, առանց տեղի տալու ցատալի միջադէպներու որոնք կրնան զէնք մը ըլլալ վա՛ս ու զրպարտիչ խնամակալութեան մը ձեռքը:

Իրատնքը ժողովուրդին կողմն է, հետեւաբար ժողովուրդին կողմը պէտք է ըլլայ պաղարիւնութիւնն ու ինքնավստահ և գթոակից զործսնէութիւնը:

### ՀԱՏԸՆՏԻՐ ՄՏԱՇՈՒՄՆԵՐ

Յայտեն կազմութիւն ունեցող  
մարմնոյ մը վրայէն միշտ  
պիտի պակսի Շնորհք :  
ՍՈՒՈՆ

### ԾԱՆՈՒԻ ԳԵՏԻՆ

Կ'իմանանք թէ, բարոյական սնանկութեան պատճառով, խնամակալութիւնը ծախու հանած է ապօրինութեան այն ընդարձակ գետինը սրտն վրայ կը գործէր տարիներէ ի վեր, անպատիժ:

Շատ մը օրինասէրներ ընկերակցութեամբ պիտի

ժառանգիցին անուշդին, և յոյժ կայ որ պէտք եղած խրատները տրուելն զերջը, քիչ ժամանակէն հոյը բարեկտի և կարելի ըլլայ վրան հոյացին սահմանադրութեան համեմատ օրինաւոր շէնքեր բարձրացնել, հալաչառու և համարատու պատուհաններով, որոնց փեղկերը ընտրութեամբ պիտի որոշուին:

Զեղծումի դոները ավրապէտ զոց պիտի ըլլան, ծախքի ծորակները որոշաւած չափէն կաթիլ մը ջուր աւելի չի պիտի վազցնեն, և թեմին ամբողջ «ծախ» երբ զօրս պիտի ելլան սահմանադրական ձինելոյզներէ որոնց վրայ պիտի բարձրանան GIROUETTE ներ որոնք չի պիտի դառնան ամէն հովի, ըլլալով սկզբունքի տէր և հաստատամիտ:



ՊՁՁՏ ԽՕՍԲ, ՁԼՌԲԷ ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ

Ալեքսանդրիայ՝ Տ. Յ. Ղազիկեանի բով և Շէրիֆ  
Փաշա լրագրավաճառ Տ. Թեյալեանի խանութը

Գահիրէ՝ լրագրավաճառ Տ. Հունկի և Կոլտըն ֆէօշքի  
բով և «Լուսաբեր», թերթի ցրուիչին յօտ:

Նախորդ շաբթուան թիւերը կը վաճառուին կրկին  
զինով:

“ԱԶԱՏ ԽՕՍՔ”, ի Պալատները

- ԱԶԱՏ ԽՕՍՔ - ԿԸ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Եզիպտոսի համար բաժնեգինն է

40 Թ ԵԸ                      40 ՂՐՇ. ՈՂՋ

20    ”                              20    ”                      ”

Ա Ր Տ Ա Ս Ա Ն Ա Ն

ԵՒՊՊԱ    40.    ԵԲԻ                      60    ԿՐԱՂՔ

ՌՈՒՍԲԱ    ”,    ”,                              4    ՐՈՒՊԼԻ

ԱՄԵՐԻԱ    ”,    ”,                              2    ՏՈԱՐ

Բաժանորդագրուելունը կանխիկ

ՀԱՏԸ 1 ՂՐՇ. ՈՂՋ

“ԱԶԱՏ ԽՕՍՔ”, ի համար բաժնեգինն կամ  
որ և է գրախնայի պետք է ուղղել հե-  
տևեալ հասցէին՝

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE, ( EGYPT )

Ծանուցումներ կընդունուին մասնաւոր  
պաշտակներով:

Պատասխանատու - Խրագիր Ե. ՕՏԵԱՆ

Տպգր. Փոքր. Կ. ՆԱԶԱՐԵԹԵԱՆ ԱԼԷԿՍԱՆԴՐԻԱ